ձեր ողորմած բերանովն յայտնեցիք ինձ թէ խնդիրքն ձեր առաքելոց եմ առ ում հարկն է վասն վճռահատելոյ, և ինձ հրամայեցիք թէ ըստ տնօրէնութեան սրբազան Յոհաննէս Պատրիարքին պարտ էք գնալ Շիրվանու երկիր Սաղիանու վանքն և ես ըստ բարձր հրամանի ձերին գերազանցութեանն ահա տասն և մէկ ամիս է որ գտանեմ աստ, և օր ըստ օրէ սպասեմ ողորմութեանդ. վասն զի իմ և միւս երեք հեգեւորականաց խնդրանաց զօրութիւն այն է զի թերեւս զխանգարեալ կառաւարութիւն սրբոյ Էջմիածնի, բարեկարգ կառաւարութիւնն կոչեսցի, որ է բան իմն ցանգալի ամենաողորմած կայսերութեանն. և մանաւանդ ձերին բարձրը գերազանցութեանն, վասն զի գլխաւոր կառաւարիչ էք կողմանցս։ Եւ ոչ թէ յանցանք ինչ արարի որ ի ծերութեան ժամանակիս անկեալ կամ յայսպիսի նեղութեան մէջ և բնակիմ ի վանքն Սաղիանու, որ է հեռի ի բնակութենէ մարդկան, որ յոյժ անտանելի է վասն իմ. վասն այն զի բնակեալ եմ մինչեւ ցայս վայր ընդ լուսաւորեալ մարդկանց. իսկ այժմեայն կեցութիւն իմ է ըստ ամենայնի՞ չարչարանք վասն իմ, եւս առաւել զի նախ Ձեր եմ, երկրորդ տկար ոտիցս և միայն անսահման ողորմութիւն ձեր և իշխանութիւն կարող է փրկել զիս ի փորձութենէս, և պարտաւորել զիս մինչ ցվերջին օր կենաց իմոց աղօթել վասն կենաց Ձերին բարձր գերազանցութեան, և Աստուածահաճոյ որդւոյդ, և թէ յամեսցին օգնականութիւնն Ձեր առ իս. գիտեմ զի գերասիճան Յոհաննէս Պատրիարքն մեր առանց խղճալոյ ծերութեանս և տկարութեանս կամի կենդանոյն մեռուցանել զիս որպէս երեւի, ի հրամանէ նորին վեհապետութեան գրեցելոյ առ իս յերկուսն մարտի 79№ որով գրէ ինձ թէ կամիս կարգեսցուք զքեզ յաջորդ երկրին Շիրվանու եթէ չկամիս զայն պարտիս մնալ Սաղիանու վանքն մինչեւ ցել շնչոյդ. վասն զի դառնալն քո Էջմիածին անհնարին է, և թէ ես այժմեան նեղութեան մեռանիցիմ կառավարութեան ի՞նչ շահ կու լինի և կամ մի՞ թէ ամենողորմած ինքնակալն և Ձերդ բարձր գերազանցութիւն կու ցանկայք որ ինձ պէս ծեր եպիսկոպոսն որ եմ միշտ աղօթարար վասն օրհնեալ կենաց նորին օգոստափառ ինքնակալութեան, որ այսպիսի անտանելի անբախտութեան մէջն մեռանիմ, համաձայն կամաց տեառն